Պակայն աշխարհէն հեռանալը զոր քննութեան առած էր, չէր կարող արգիլել զինքը երեւելի և հանճարեղ տնտիւր տեսնելու, որոնք առաձնութեան այս գիտաւորութիւնները ունենալով՝ իւր կարծիքը կը հարցանէին և ճշգրութեամբ անոր կը հետեւէին, և ուրիշները՝ որոնք հաւատքի վրայ տարակոյտ ունէին, գիտնալով որ եղբօրս միտքը շատ բարձր էր, կուսնային անոր խորհուրդ հարցնելու, և միշտ գոհ կը դառնային : այնպէս որ այն բաւր անձինքը՝ որոնք հիմա կ'ապրին քրիստոնէական կեանքով, կը վիպեն որ անոր խորհրդոց, տուած անդեկութեանց և բացասութեանց պարտական են իրենց ամեն բարեպետ կենցաղապարտութեամբ : (Վանաստուած

թիւնները՝ ուր զինքը՝ շարունակ կը հրաւիրէին, թէպէտ և բոլորն ալ Ստուածասիրութիւնը նպատակ առնէին, սակայն քանի որ հոն գտնուելու ըլլար, առանց վտանգի դուրս չելլու երկիւղը իրեն մէջ կը կրէր : և ոչ բովհետեւ խնդր իրեն թող չէր տար մերժել մարդկանց օգնութիւնը, զոր իրմէ կը խնդրէին, ասոր համար ալ ուրիշ հնարք մը գտած էր » :

Իներքուստ մարմնայն վրայ՝ սլաք քաւոր երկաթէ գտնի մը կը գործածէր, և երբ քանի մը ունայն մտած մտնք գալու ըլլար, կամ զուարճութիւն զգար այնտեղ, ուր կը գտնուէր, կամատունջ նման քաներ պատահէր, արմու կի հարուածներով կը կրկնապատկէր սլաքի հարուածոց օտար կութիւնը, և այս կ'ընէր իր պարտաւորութիւնը չմտնայու համար : Եւ կիրառութիւնը իրեն այնքան օգտած կար երեւեցաւ, որ մինչև իւր մահը պահպանեց և իւր կենաց մինչև վերջին իսկ վայրկեանը, ուր շարունակեալ ջանոց մէջ էր, որովհետեւ ոչ գրել և ոչ կարգալ կարող էր : ասիպուած էր դատարկ մնալ և զուտնքի երթալ : Եւ շարունակ կը վստահար որ անգրաղ կեանքը՝ զինքը իրեն նպատակէն չը հեռացնէ : Սենք այս ամեն բաները իրեն մահուանէն յետոյ գիտցանք, և առաքինի անձէ մը՝ որուն վրայ մեծ վստահութիւն ունէր, և որուն պարտաւորուած էր ըսել ամեն բան պատշաճառները բացատրելով » :

Այս կենաց խառութիւնը՝ յատուց կու գար այն մեծ սկզբունքէն զոր իրեն վրայ կը գործագրէր, այսինքն հրամայելով ամեն հեշտութիւններէ, որովհետեւ այս սկզբունքի վրայ հիմնած էր իրեն կենաց բոլոր կանոնը : Իւր մեծ նակեցութեան սկզբնաւորութեան 'ի վեր միւս սկզբանէ զործագրութեան

մէջ եւս թերի չէր մնար, որ զինքը կը
 առիպէր բոլոր ունայնու թիւններէ հը
 ըտժարիլ: Վասն զի այնքան ջանադիր էր
 բոլորք անօգուտ քանկերը նուազեցու
 ցանել, որ կամաց կամաց իրեն սենե
 կին մէջ օժոց կամ գորգ մ'ալ չէր
 քանուէր, որովհետեւ կը հաւատար
 ար ապիկա կարեւոր բան մը չէր, նոյն
 իսկ վայելու թեան համար ստիպուած
 չէր ունենալ, քանզի իւր մօտ միմիայն
 իրեն մարդիկը կուգային, որոց ձեռ
 քով միշտ կը պակեցնէր իւր սենեկի
 կաշ կարասիքը: Այնպէս որ անոնք եր
 քէք չէին զարմանար անոր այն տեսակ
 ասպրեւուն վրայ և զոր ուրիշներուն և ո
 յորդոր կը կարդար 'ի գործ դնելս
 Ահա հինգ սարուան անցուցած
 կեանքը, երեսուն տարեկանէն մինչև
 երեսուն և հինգ քանդադար աշխա
 տելով 'ի փառս Աստուծոյ յօգուտ ըն
 կերին և իրեն անձին, ջանալով և ս քան
 զևս զինքը կատարելագործել և կարող
 է մարդ բոլ թէ՛ այս է բոլոր ժամանա
 կը որուն մէջ նա ապրեցաւ, որովհե
 տեւ վերջին չորս տարին զոր Աստուած
 յետոյ իրեն տուաւ, ուրիշ բան չէր՝
 բայց եթէ վիշտ և նեղու թիւն: Աւ
 նեցած հիւանդու թիւնը նոր պատա
 ճած հիւանդու թիւն չէր, այլ մեծ
 օկարութեան մը կրկնութիւնն էր,
 որուն ենթարկուած էր իրեն պատա
 նեկութենէն. բայց այս՝ միջոցիս այն
 չափ ստոտկացաւ, որ վերջապէս զանի
 կա ընկձեց և բոլոր շրմանիս մէջ նա
 մէկ վայրկեան չը կրցաւ աշխատիլ այն
 գործին, զոր ձեռնարկած էր կրանին
 համար և ոչ օգնել անոնց՝ որոնք ի
 րեն կը դիմէին խորհուրդն ու կարծիքը
 հարցանելու, ոչ բերանով և ոչ գրով,
 որովհետեւ իրեն չարարանքը այնքան
 շատ և սաստիկ էր, որ չէր կրնար ա
 նոնց հետաքրքրու թիւնը յագեցուցա
 նել թէպէտ և ջատ կը բաղձար:

Իւր հիւանդութեանց այս նորո
 գութիւնը ատամնացաւով մը սկսաւ,
 որ անորմէ քուն ըսածդ բոլորովին բար
 ձաւ: Իւր մեծ տքնութեանց մէջ զի
 չէր մը աննպատակ մտածութիւն մը
 անիտի առաջարկութեան վրայ միտքը
 եկաւ: Այս մտածմունքը ուրիշ մը հե
 տեւեցունելով, և ասոր ալ դարձեալ
 ուրիշ մտածում մը յաջորդելով այսպէս
 մտածութեանց բազմութիւն մը որք
 իրարու ետև հետզհետէ յաջորդեցին,
 պարզեցին անոր գրեթէ ակամայ այս
 ամեն բաներու լուծու մը և պատճառ
 ները, որուն վրայ ինքը ևս շատ զար
 մացաւ: Այս որովհետեւ երկար ժա
 մանակ կար որ նա իրեն հմտութիւն
 ները շարունակելէն դադարած էր,
 այս պատճառաւ չուզեց որ միայնակ
 զաննք գրէ, այլ պատեհ ժամանակ
 կայ մէջ մէկուն պատմելով, որմէ շատ
 կ'ահնածէր, ամենայն յարգանք և ե
 րաստագիտութեամբ, որով կը պա
 տուէր զայն. այս անձը՝ որ իւր բա
 րեպաշտութեամբ այնքան նշանաւոր
 էր որքան իւր մտաց պատուական
 ձրիքն ու տղնու ատոճմ ըլլալովը՝
 կազմեց և յարդարեց մի ծրագիր, որ
 միայն Աստուծոյ փառաշքը կը վերաբե
 ըրէ. և այս անձը գտաւ յարմար ժա
 մանակ որ զայն գործածեց ինչպէս որ
 շինուած էր և յետոյ զայն տպել տու
 աւ: Ապայն թէ գրութիւնը և թէ
 սուղագրութիւնը կատարուեցաւ ջե
 տապաւ:

Բայց իւր հիւանդութիւնները՝ ա
 ռանց զինքը մէկ վայրկեան հանգիստ
 թողելու, ստիպեցին զինքը նաեւ, ինչ
 պէս որ առաջ ըսինք, երբէք չաշխատիլ
 և գրեթէ ոչ օրի հետ ալ տեսութիւն
 չէր կրնար բնել: Այնպէս հատարակաց և
 մասնաւորաց ծառայութիւն մտաու
 ցանելու յարգիլուեցաւ այս ակարա
 թեանը առ թիւս այնու ամենայնիս

երբէք իրեն համար անօգուտ չեղան նորա, և ինքը այնքան հանգարտութիւն և համբերութեամբ տարաւ, անոնք որ կրնանք ըսել թէ Արտուած ինքը այսպէս անօրինեց և այն վիճակի մէջ դրաւ որով պիտի իրեն ներկայանար որովհետեւ այս երկար հիւանդութեան միջոցին երբէք անիկա իւր նը պատահէն չը խոտորեցաւ, միշտ իրեն մորթին մէջ ունենալով այն երկու մեծ սկզբունքները, այն է հրաժարիլ բոլոր զուարճութիւններէ եւ ամեն ունայն բաներէ, Այս սկզբունքները իւր ամենախիստ ցաւին մէջ անգամ մէկ շարունակեալ արթնութիւն կը գործադրէր իւր զգայարանաց վերայ, և կը զրկէր զանոնք ամեն հաճելի առարկաներէ, եւ հարկը ստիպած ժամանակ անգամ սքանչելի ճարտարամտութեամբ զանցառութեան կը տար հեշտարար գործքերը () Իրնակի համար, իւր ցաւերը զինքը փափկութեամբ սպրեւրել կը ստիպէին, սակայն ինքը մեծ հոգ կը տանէր կերակուրները չը խտրել, և մենք որչափ կ'աչխատէինք աղէկ միս փնտռել իւր ախորժակը բանալու, սակայն օր մը չըսաւ թէ ահա այս լաւ է, և դարձեալ եզանակին յարմար նոր պտուղ կամ ուտելիք մը կը տայինք, եթէ ուտելէն վերջը հարցունէինք թէ ինչպէս էր, պարզութեամբ մը կը պատասխանէր՝ պէտք էր որ առաջ հարցանէիք, կը խոստովաւ

նիմար բնաւ չընկատեցին, և երբ կը պիտատահէր որ մէկը իրեն ներկայութեանը ինչ և ինչ մտմը աղէկութեանը համար զարմանք կը ցուցնէր, չը կրնար զանոր համբերել և կամ լռել, մարմնագետք կը կուէր զանկից, թէպէտ և անսք սովորական բաներ են, բայց նա կ'ըսէր թէ՛ ասիկա մէկ նշան է որ մարդիկ կերակուր կուտեն իրենց բնորոշ հայնելու, որ միշտ վատութիւն համարուած է, Այս բանիս մէջ չի նարգ համար, թող չէր տայ որ իր կերակուրը համեմունքերով պատրաստեն, և կամ նորընտրով կամ ազոխաջրով որ կը գնար իւր ախորժակը գրգռել, թէպէտ և բնականապէս այս ամեն բաները կը սիրէր :

Այս կանոնադրեալ սահմաններում մէջ ինքզինքը հաստատելու համար թիրեն առանձնութեան սկզբնաւ որով թեմէն ՚ի վեր զգուշացած էր ստամաքի սի կողմէն, և ուտելու բաները կանոնի տակ դրած էր և այնպէս որ ինչ անորոշ ժակ որ ունենար՝ երբէք կանստ չէր ելնէր, և ինչ բանի որ ախորժակ չուներ՝ անկէց եւս պէտք էր որ ուտէր, և երբ իրեն անոր պատճառը կը հարցունէին թէ ինչու ինքզինքը կը ստիպէր այսպէս, կը պատասխանէր, որ այն ստամաքի անհրաժեշտ պիտոյքն է որ պէտք է տրուի և ոչ թէ աստամաքը հաճեցնելու է :

(Պիտի շարանախոյ) Եւ

Խ Օ Ս Ա Կ Յ Ո Ւ Թ Ե Ա Ն Վ Ր Ա Թ

Եթէ մարդիկներէն բիւերը խօսակցութեան մէջ հաճելի կը գտնուին, պատճառը այն է, որ իւրաքանչիւր որ աւելի կը մտածէ, թէ ինչ կերպով խօսի, քան թէ կը մտածէ թէ ուրիշներն ինչ կերպով կը խօսին, և այսպէս

ամեն որ խօսելու կը բաղձայ, քան թէ չը խօսուի :

Այնու ամենայնիւ խիստ կարեւոր է այլոց խօսակցութեան ունկնդիր ըլլալ, պէտք է ժամանակ տալ ուրիշներուն խօսելու, նաեւ համբերել իրենց :

անոց առ բաներ անգամ խօսին , ու
 քանից հակառակելու կամ խօսակցու-
 թիւնը ընդ միջևու , անսնց հոգւոյն
 և շաշակին մէջ պէտք է թափանցել
 և ցուցնել խօսողին որ կը լսեն իւր լը
 սածնեքը , և ցուցնել նաեւ որ ընտրու-
 թեամբ կը գովեն զանոնք և ոչ թէ հա-
 ճարանորդու և շոգորթթեբլու համար :
 Սենկնդիրներուն հաճելի ըլլալու
 համար պէտք է խօսիլ այնպիսի բաներ
 զոր նորա կը սիրեն և որ զանոնք կը
 շարժէ . անհաճոյ բաներու վրայ խօսե-
 լէ պէտք է խոյս տալ և դուռ ուրեք հար-
 ցաւ մներ ընել անոնց . երբէք կարծեսց
 անդի չի տալ ու կնդիրներուն . իբր
 թէ մենք իրենցմէն աւելի ճշմարտա-
 սէր երեւնալ կ'ուզենք . որչափ կարելի
 է պէտք է ծանոթաբարոյութեամբ և օրի-
 նաւոր նիւթերու վրայ խօսիլ , նայելով
 ըտոյներու բնաւորութեանը և ընդու-
 նակիտութեանը . պէտքէ ունկնդիրնե-
 րուն թողուք , որ վճռեն մեր խօսակ-
 ցութեան արժէքը քանիթէ ստիպենք
 զանոնք , որ իրաւունք տան մեր բասձ-
 ներուն , երբ անոնք խօսելու բաղձանք
 չունին :

Քաղաքավարութեան այս պատշաճ
 պայմանը կատարելէն յետոյ՝ կրնայ
 մարդ յայտնել իւր կարծիքները , այն
 պէս ձեւացնելով , թե իրեն կ'ուզէ
 ունկնդիրներուն կարծիքը հաստատել
 և բնաւ մեծամտութիւն կամ յամա-
 ռակութիւն չի ցուցնել այն պարագա-
 յիս մէջ :

Պարտիկը խոյս տալ մանաւանդ մին
 նոյն բանի վրայ յաճախ խօսելէ և մեր
 անձը օրինակ տալէ , վասն զի բան մը
 այնքան անսխորժ չէ , որքան խօսակ-
 ցութեան բարձր նպատակը իւր անձին
 վրայ եզրակացունելը :

Պէտք չէ նմանապէս մեկնու թիւն-
 ներ տալ խօսակցիներու տրամաձնե-
 րուն և անոր կամ անոր համակարծիք

ձեւանալու նպատակաւ , որով ուրիշ
 ներք կրնան վերաւորիլ : Այլ պէտք է
 նշանակել բարձր խօսուած խօսակցու-
 թիւնները , յաւելցունելով համեա-
 տութեամբ անոնց վրայ մեր յատուկ
 մտածութիւնները , որքան որ կարելի
 է հաւաստցնելով որ իւր խօսքերէն
 կ'առնուինք մեր ըսածները : Ոչինչ պէտք
 չէ լսել իշխանական ձեւով և ոչ բը-
 նաւ գերագանցութիւն ցուցնել Վախ-
 չինք պաճուածեալ , կոպիտ կամ անբնա-
 կան խօսքերէ , և առանց նիւթին պատ-
 շաճելու մեծ մեծ ու յարմարութիւն
 չունեցող բառեր չարտասանենք :

Արդեւրուած չէ մարդուն իւր կար-
 ծիքները պաշտպանիլ , եթէ բանաւոր
 են . բայց պէտք է զիջանիլ իսկոյն երբ
 ճշմարտութիւնը այլոց կողմն է , ք-
 խտրելով ամենեւին խօսող անձը , մի-
 այն ճշմարտութիւնն ու իրաւունքն է
 որ պէտք է տիրէ մեր գգացմանց վրայ
 Պէտք ենք ուրեմն հետեւիլ մեր զգա-
 ցութեանը , առանց այլոց վերաւորե-
 լու . և առանց արհամարհելու անոնց
 խօսածները :

խօսակցութեան մէջ իշխանաբար
 վարուիլը վտանգաւոր է , և մանաւանդ
 իւր դատած մէկ ճշմարտութեան վրայ
 չափէն աւելի երկարաբանելը : Այնու-
 ութիւնը կը պահանջէ երբեմն ծած-
 կել իւր , սրամտութեանը կէտը և իր
 կամոց վրայ յամառողին հետ խնայու-
 թեամբ վարուիլ որպէս զի չը պատկա-
 ռի զիջանելու : Սուրբովին անհաճոյ կը
 թուի երբ մէկը երկար ժամանակ եւ-
 ստեպ մի և նոյն բանի վրայ կը խօսի ,
 և որ միշտ խօսակցութիւնը այն նիւ-
 թերուն վրայ կը դարձնէ , որոց մէջ
 զինքը ուրիշներէն աւելի հմուտ կը
 կարծէ : Պէտք է անխորաբար խօսիլ
 այն ամեն բաներու վրայ , որք հաճելի
 են ունկնդրաց . հաստատել զանոնք
 այնպէս , որքան նորա կ'ուզէ և հեռաւ

նոր քորորովն այն գրայնելէն և որք ունկնդրաց չեն յարմարիր :

Այնն խօսակցութիւնն, որչափ որ ի մատուցից ըրայ, հաւաստրուպէս ամեն մարդու, պարտեմ չգար և խօսելու ժամանակ պէտք է ուրեմն ընտրել ինչ որ պատշաճ է ունկնդրաց ճաշակին, վիճակին, սեռին, տաղանդին և ընդունակութեանը : Պէտք է մինչև անշտմ խօսելու յարմար վարկեանները եւս ճշտակել :

Վիտտները որեւմն տեղը, պատեն ժամանակը և հանդամները, ուր որ կը գտնուին ունկնդիրները, վասն զի եթէ պատշաճ խօսիչ գիտնալը մեծ աւուճատ է, անկէց փոքր արհեստ չէ նստել լռելու ժամանակը գիտնալը : Պերճախօս լռութիւն մը կայ որով ա

ւելի կարելի է արացուցանել կամ մերժել, քան թէ շտախտութեամբ և կայ իմանապէս խոհեմութեան և անհանձութեան լռութիւն մը : Այն վերջ ջապէս ձեւեր, եղանակներ և ոճեր որք որ և է խօսակցութիւն մը, հաճելի կամ անհաճոյ, քանզոր կամ տարուկալի կ'ընեն : Իայց նոյն պարագայները պատշաճապէս ի կիր առնուլը սակաւ մարդկանց որուած է : Այն իսկ անոնք, որ խօսակցութեան գաղտնեաց խորը թախանջամ կը կարծեն ինքզինքնին, շատ անգամ կը սխալին :

Իայց ամենէն պատշաճը սա է՝ շատ լսել, քիչ խօսիլ, և ջրխօսիլ այնպիսի բան, որոյ վախճանը աստիճանայն է :

Թարգ. Գ. Ս. Երեսնայն
Ա. Ե. Երեսնայն

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ի

Ա Մ Ե Ն Ա Պ Ա Տ Ի Ի Ս Բ Ա Չ Ա Ն Հ Ա Յ Ի

Այն կը փութանք խոնարհական ակնածութեամբ կատարել Սեծախը նամ չորք պահանջները՝ մատուցանելով : Չեղ մեր ճանապարհորդութեան համառօտ Տեղեկագիրը :

1867 Ապրիլ ամս, սկիզբը, հրամանատար Չերալ, Ս. Բաղարէս մեկնելով և Յարդեռ նաւահանգիստը պատրաստ չուէնաւ մը գտնելով՝ երկու օրէն հասանք Ալեքսանդրիա ուր ըստ հրամանի Չերալ հարկաւոր եղան ընծայացաններ գնելով՝ երանք Ալեքսանդրիայի Ս. Բաղարէս Վեդիլից Հիւսիսային դրութիւնները ընդհանաբ Հիւսիսային մատուցինք, և անոր փնտրենութեանցը կ'ընտրուէինք ճանապարհ ելելու, քայց նա ընդդէմ մեզ ակնկալութեանց չարք քր պարագ

տեղը մեզի սպասեցնելն զիմի վերջ ջապէս մեր հանդիպելը անդրը գրայնուող հիւսիսային համար յանձնարարականներն ընդունելով իրեն : Այսին Վ. Ս. Սեծախարհ երանք գեղ ի Սուէլ, քայց գժբարդաբար չուէնաւ ըր երեք օր յառաջ մեկնած ըլլալով անկէց, հարկադրեցոնք սասն երկուօր հոն սպասել, ճայնպէս Ղիտտեի մէջ ալ բոտական օր ճայնիք : Այս ժամանակի կորուստները ինչպէս յայտնի է, Վ. Ս. Սեծախարհ մէջ չորք օր մնալն յառաջ եկաւ :

Սուստիցէն թէ սպասու թագաւորին քով երթալու ճանապարհները պարտաբաց մեք ըլլալով, Ալեքսանդրիայի գժեւոր ճանապարհով ստիպուեալ ցանք գ'եւալ և յուսնիս վերջերը հա

սոնք կ'սղարկուի, որ է Հապէշի և Գուհրէի սահմանատեղին, թէ պէտ այն կողմերու ձմրան անձրեւները արդէն սկսած և սաստիկացած էին, բայց մեր պարտաւորեալ նպատակին ժամ մը յառաջ հասնելու համար, հարկադրեցանք սաստիկ անձրեւներէն թըրջուելով և յորդեալ ու սաստիկ հաստանգութեան վերջէն մերկ անցնելով, հազու թէ յուլիսի վերջերը Տարսիսի պալատը ամենաբարձր և գոյաբարձ ամառային հասանք շինանապարհին այս նեղութիւններէն և եզանակաց խտուածներէն սկստանալով մեր հեան եզոզ լճէ կիկէ անուէն եկեղեցական պատանին, զոր եղաւ անողորմ մահուան, եթէ առաքել մէջ:

Տարսիսի պալատի կէտի թափոք՝ որ երէք առաքել ճանապարհէր, ուր կը գտնուէր թագաւորը, անհնար եղաւ մեզ երթալ հոն՝ գետերուն սաստիկ յորդութեան պատճառաւ և սուրբ աստուծոց երկիւղներէն, մանաւանդ որ՝ առանց թագաւորի գիտութեան չէր կարելի իշխաններուն մեղի անոր մօտ զգիւլալ, միայն Ս. Խաչի տօնին վերջերը սուրբութիւն ունին իրենց կողմէն թագաւորին մօտ մարդ խրկելու:

Երբ թագաւորին մեր հոն հասնելն ալ ի մտայնցին անոր, թէ ոչ ոք որտեք կը լինէ մեր գալուստը խիստ կ'ուրախանայ և կը պատու իրէ մեր գտնուած երկրին իշխաններուն՝ որ պատուով հիւրասիրեն մեզի, և կը խոստանայ ըսելով՝ թէ Մատուռով քիչ օրէն կամ անձամբ գալով կամ վաշտ մը զօրք խրկելով իմ քով կ'ընդունինք զիրենք: Երբ միջոցին խաչի Վարդապետի անուն առաջարկելն իւր բնական ցաւոց վերջ մեր գալուստն ըսին ալ աւելի ցաւ տալով իրեն՝ յանկարծամահ կը մեռնի Մակտեղա քաջ բանասիրութեան մէջ, իսկ մենք պատեհ առ իմ

գանելով՝ Մէհէմէտ Կոնուզ անուանով սուրհանդակին ձեռք Տարսիսի իշխաններէն գաղտնի Վարդաբէրէն լեզուաւ նամակ մը զրկեցինք թէ ոչ ոք թագաւորին, որ ի նշան ընդունելու թեան գրոյն և ի պատու մեր ջորի մը պարգեւելով թղտատուրին՝ վար կը գնէ զինքը ըստ սովորութեան իր տալիք հրամանացը սպառնելու համար:

Երբ ուրախական աւերակները ան անգամ կը հազորդէր մեզ անկէ թղտատարը Շատ շնորհալ թագաւորը մեր գալուստն համար իւր զգացած ուրախութիւնը բերանայի յայտնելէն զստ՝ մեր նամակին ալ կը պատասխանէ կրկնելով իւր առաջին խոստումը, բայց նամակը երկրին իշխանաց ձեռքն անցնելով ոչ միայն անոր մէջ պարունակուած յուստգրական իօքսքերէն կը զրկուէր, այլ և իշխանները մեր գաղտնի բանագնացու թիւնը խնամալով կրկնին ընդ ախմբ նայլ մեզի, որոնք թէպէտ առ երեսո հպատակ, բայց սրբաւոր հակառակ էին թագաւորին:

Երբ միջոցներուն թէ ոչ ոք որտեք զրկական բանակին իւր վրայ գալու ձայնը առնելուն պէս՝ Վերջի թափոք լեռը ձգելով՝ գէպի Մակտեղա գնաց, ուր սեղ էր իւր բոլոր շղթայակապ բանասիրելոց անտոկի բարձր լեռը, որ մեզմէ ութ օր հեռի էր, Երբ առնէ սպաստանները մեր վրայ թափեցան:

Թըրքոս — Կովազի անուն զորավար ապստամբը սիրեց մեր իշխաններուն բոլոր նահանգին, միայն Տարսիսի պատանակ լեռը մնաց, ուր մենք կը գանուէինք: Երբ իշխանները թէ ոչ ոք թագաւորին հաւաքած գանձերը մէջերին բաժնէլէ զստ՝ գիշերանց յանկարծ մեր երկու խոշոր սնտուկներուն մէջ գանուած թանկագին ըն

ծայացումներն և սւրբ Հորհրտ որ Գոյքերն յափշտակելով և մեզի հնն թողելով կրփախնն կ'երթան ։ Առաւ ստուն թըրոս-Արիւղի ազատամբապեսը լեռանը տիրելով մեզի ալ կառնու իր բանակին հետ Չմնկ ըսուած տեղը կը տանի ։ Իւր անուղղակի կերպիւմեր ազդութիւնն ու կրօնքը քննել տայէն զկնի քանի մի անգամ ալ կրօնական մեծ ժողովներ կազմել տարով ։ յայտնի քննել կուտայ ։ որոնք մեր Հայ ըջալը և ուղղափառ հաւատք ունենալը կրտուգեն ։ և Հայոց վրայ ինչ որ գրուած է իրենց Կրքերուն մէջ ։ համաձայն կը գտնեն անոնց մեր տուած դաւանանքը ։ Իւր յետ այնորիկ զմեզ իրենց իրեւ դաւանակից կ'ընդունին ։ Այս վրայ թըրոս-Արիւղի կրակի մեր առջեւ խմորհիլ ։ մեր ձեռքն եղած խաչը կը համբուրէ ։ ներուղութիւններ կը խնդրէ ։ և հրաման կուտայ որ մեր ապրուստը հոգան ։ Այսու ամենայնիւ իրենց եկեղեցականաց զրգամմբը չուզէր դարձեալ հրաման տալ մեզի մեր երկիրը վերագառնալ ։ այլ կ'ըսէր թէ « Աստուած զիկեց ձեզի մեր քովը ։ և ձրի եպիսկոպոս ու առաջնորդ մը մեզի պարգեւեց ։ ։ ։ ։ նպատակն այն էր որ իւր բաղձանքին համեմատ թաղաւորիւր որ ըլլայ ։ օծումը մեր ձեռքն ընդունի ։ և լեզու իրեւ առաջ նորդ Խոստեր քաղաքը նստեցնէ ։

Չհատու անիկայ իւր բաղձանքին ։ այլ կուտայ մը մէջ Արիւղի-Արիւղիէն զորնուեցաւ ու մեռաւ ։ և մենք նոյն ամենազորաւոր ապստամբին ձեռքն ընկանք ։ որ մեզի ետ դարձնելու համար տուած աղերսագրերին և թախանձանքնիս բնու չէր ուզէր կտուարել ։ ճանապարհները գոց են ըսելով ։ և իւր փառասիրութեանը կը ծառայ յեցնէր մեզի ։ Այսպիսի դաւան վիճակի և անանկ վարքանոցնու ժողովը ։

գեանմը մէջ յոյտերնիս միայն Աստուած դրած է ինք ։ և այս երկամեայ միջոցին մէջ հազիւ թէ մէկ անգամ կարողայ յանք Աստուծոյ անօրէնութեամբ նազ մակ մը ուղղել Ձեր Ամենապատիւ Հայրութեան ։ և մեր վերագարձը հը նարելու ճար մը գտնել ։ Այս միջոցին Առաւիյի Գաղղիական Հիւպատոսը որ միանգամայն Անգղիոյ Տէրութեան ալ գործակալ է ։ յատուկ նազ մակաւ կը խնդրէ թէ կրի իշխանէն ։ որ ճանապարհ տայ մեզի մեր երկիրը դաւանալու ։ նոյնպիսի գիր մ'ալ կ'ուզարիկ Արիւղի-Արիւղիին ։ որ մեր վերագարձը փութացնէ ։ իմացնելով անոր թէ կրի երկիրն բաց ըլլալը ։ Արիւղի-Արիւղիին նոյն գիրը ստանալէն քանի մը օր ետքը մեր կրկին աղերսագրին ալ ընդունելով ։ վերջապէս կը զիջանի և ճամբայ կը հանէ մեզի թէ կրի վրայօք ։ որու իշխանը Տէճազմաճ Վաստան մեծ պուտուով ընդունեց մեզի ։ և ճամբու ծախուց համար հազար թախե ։ և չորս ջրի ընծայեց ։ և կէտ ժամ հետեւին ընկերանալով իւր բանակաւ ։ իխտ մեծ պատուով ճամբայ դրաւ ։

Արագան Հայր ։ այս երկամեայ պանդխտութիւններնուս մէջ անասնելի նեղութեանց մասնուեցանք ։ երբեմն այս գին և երբեմն այն գին թափուելով ապստամբներու ձեռք ։ Իւր թէպէտ շղթայակալ չէ ինք և ոչ բանտարկած ։ այլ ազատութեան շունչը կը ծրծիկը ։ բայց քաղաքական պատերազմին պատճառաւ ։ որ անմիջապէս սկսաւ ։ ճանապարհները աւելի վտանգաւոր եղան ։ Այս և այն ապստամբ իշխանները որոնք թէ ողորտի մահուանէն առաջ և ետքը թագաւորութեան թեան հետամուտ էին ։ մեզի իրեւ Արիւղի պոս եւ վարդապետ իրարու ձեռքէ խլել կ'ուզէին և իրենց հետ անտուն և անյարկ կը շրջեցնէին ։ յու սարով ։

ար մը կը թաղաւորեն և մեր ձեռք
կ'օժուին ք ուստի մեզի հետերնին
զաննալը իրենց փառաց ու բաղձանաց
հասնելու համար էր :

Անզի առ կըլ վշտոցնողը թէտո-
սի անակնկալ հեռանալը և Մագրիա
կան բանակին շուտով վերայ հասնիլն
եղաւ : որով մեր ցանկալի նպատակը
անգործագրելի մնաց : Չեմք ուզեր
այս նիւթիս վրայ երկար խօսիլ, ան
ձանօթ ըլլալով մեզի՝ Մագրիական կա
թափաբու թե այն մասին ունեցած ըն-
թացքը սա մասնաւոր նկատմունքները :

Ահա, ապի, Սրբազան Հայր, մեր
ճանապարհորդութեան և մեր պաշտօ
նին համառօտ տեղեկագիրը, զոր պա
տիւ ունիմք Չեր Սրբազնութեան մա

տու ցանկելու, որով պիտի խնենաք յայտն
նապէս թէ աստուածային Տեսչու թեան
մէկ գործն էր այնպիսի վայրենացեալ
աշխարհի մէջ կենդանի մտորով մեր
վերադարձը : Չեր Սրբազնութեան և
բարբ միաբան Հայր և օրհնեալ Ազգիս
արժանաւոր ազօթից օժանդակութիւ
նըն ալ, կը հաւատամք որ, մեծապէս
օգնեց մեզի :

Սոյն տեղեկագրիս հետ նո իրելով
Չեր Սրբազնութեան նսեւ մեր ճա
նապարհորդութեան վրայ գրած ըն-
դարձակ տեղեկութեանց պատմնե
թեան գիրքը ք մնամք խորին ակնա
ծաութեամբ :

Իսկակ Արքեպիսկոպոս
Տեմրիկոս Օւսկարապետ :



ՀԱՄԱՌՕՑ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՐ ԵՒ ՈՍՏԱՆ ԳԱՆԱՌԱՅ Ե՛

Վարագայ սուրբ ուխտէն ելլելով
առաւօտեան ժամ վեցին հասանք Մե
գրը ըստեան գիւղը : Այս այն գիւ
ղն է, ուր մեր քաղին Վարդանայ ժա
մանակ Վեւնդեանց ուխտագիր
ծուրք խու մը ժողոված էին և Պարսից
գէմ պատերազմելու կը պատրաստու
էին : Գանի մը ժամ տեղս հանգիստ
առնելէն զինի՝ ելանք Պարսից բանա
կաակողք ալքե անցնելով ՚ի գիր ք

(*) Ներկայ համառօտ Ստորագրութիւնը ԱԹՅ
այս Աթժ. միաբան Ազգամարտի Երզնանէս վար-
գապետի գրուածքն է, զոր անցեալ տարիները իւր
պարտեանց աջելութեան զնացած՝ միջոցին աշխա
տարեամ է ք Մեկը հրատարակելով այն ստորագրու
թիւնը գլխաւոր նպատակ ունիմք ամեն բանիմաց
Հայու առիթ մը տարաւ, որպէս զի կայ Հայրենաց
մեջ շրջապայած ժամանակ ջանաց ՚ի գիր սրժանալը
նէլ իւր տեսանները ՚ի գիտութիւն հեռաւորաց
ժամն զի եղիլտոտի և բարեկամի գեանապար աւե
բանները այժմ աւելի յայտն են գիտնական աշխար
հին, քան թէ՛ Հայաստանի մակերեսութի տեղա
գրութիւնը Հայուն ք անգապայութեան նշան է և

քինք : Այս տեղ կայ բարեհամ աղ
բիւր մը, որոյ անունն է Քրմաղբիւր, որուն համար աւանդութեամբ կրտն
թէ Պարսից քրմապետը այս աղբիւրին
եղբրք բանակած էին : Այս աղբիւ
րին ներքեւ, Արեւելեան կողմէն մը
ղանի մը երկայնութեամբ և մէկ մը
ղան լայնութեամբ : Ըսուէտ մարդա
գետին մը կայ, որ Արեւմտեան կող
մանէ իւր երկայնութեան ծայրը
չորս ժամ հեռաւորութեամբ միւ
շեւ Ազգամարայ ծովալիը կը հա
ցունէ, և հիւսիսային կողմանէ ունի
իւր եղբրք մեծ գեան Մագրայ որ
Հայկալ Չորս Արեւելեան կողմի սա
կաւ ինչ ՚ի Հիւսիս կրթնած զեռնե
րէն ելլելով արագընթաց այս մարդա
գետինի եղբրքէն անցնելով կը թափի
՚ի ծովն Ազգամարայ : Այս տեղս Հա
յոյ չորս գիւղից վրայ բաժանուած է,
արց անուննէն են՝ Մագր, խարտկանց

Ռուբրայէն եւ Սարս 1 որոյ համար աւանդութեամբ կրտսն թէ Հայոց թագաւորաց աստն որբունի մարտաւորն եղած է , այս արտաճառաւ է որ Սարս կրտսն : Ըյս մարգագեօսինէն , 1864 ին , Խոն Սահմուտի եղբայր Լուսաղաղ անուն բարբարոս Վուրդը մաս մը բռնի Հայոց ձեռքէն յափշտակելով իւրացուցած է : Ըյս չորս գիւղից բնակիչները ամենը մէկ տեղ առնելով հաղիւ վսթառն տան կը հասնի : Իսկ գետեպէրի հիւսիսային կողմը , Ղնդղայ սկսեալ գէպի արեւմուտք մինչև ծովըրը , Հայոց վեց գիւղ կայ որոյ բնակչաց թիւն Կրկու հարիւրէն աւելի է :

Ըյս գիւղերու անուանքն են Ղնդղը Սաշկեկտակ , Իշխանիբում , Վազք , Խորգամ : Ըյս գիւղիս արեւմտեան կողմը ծովըրքին մտ բլրակ մը կայ 44 սունաչափ բարձրութեամբ և ըստ բաւականի լայն , որոյ գագաթին վրայ յանուն Սուրբ Վարդանայ փայտաշէն փոքրիկ մատառն մը կայ : Կտայն երկրի աւանդութեան կըսեն թէ նոյն բլրակը Վարդապարտի իշխանէն առաջ չիկայ եղեր . վասն զի Վարդապարտի իշխանը բլրակին տեղը կամարակապ եկեղեցի մը շինած ըլլալով , երբ որ կը մեռնի նորա մարմինը իւր ընտանիքը այն եկեղեցոյն մէջ կը թաղեն , և ապա եկեղեցին ալ հողով կը ծածկեն , որպէս զի իշխանի թշնամիրը չը գան անոր մարմինը գոզանան ու այրեն և այս կտակածը մեծ մասամբ Յունաց ազգէն կը յըջնեն :

Ըյս բլրակի Լրեւմտեան Հարաւային կողմը կէս ժամ հեռաւորութեամբ փոքրիկ կղզի մը կայ , որոյ տաւրածութիւնն է մէկ ու կէս ժամ և իւր անունն ալ Վուրմանց կամ Վրմանց կըսուի : որուն համար աւանդութիւն կըսուի թէ Սոսան գետ տեի Վուրմա-

բը այս տեղ կը բնակէին , այն օրստ ճառատ է որ Վրմանց կղզի կըսուի վերոյ յիշեալ կղզին Խորակակից Հայ գիւղացոց սեպհական կալուածն է : Սոյն կղզոյն մէջ Ի հնու մի Հայոց գիւղ եղած է , որոյ մէջ 38 խաչանշան վաղեմի արձանները դեռ կեցած կը մնան :

Ղնդղ գիւղի Լրեւելեան կողմը կէս ժամ հեռի , յանուն Սուրբ Լուսաւածանայ մեծաշէն վանք մը կոչ աղիւտաշէն ուսարարաւ ամբողջական , որոյ մէջ 38 փայտաշէն սենեակ կը պահունակի : Վանքին հարաւային կողմը 10 քայլաչափ հեռաւորութեամբ Ղնդղայ մեծ գետը վանքի ներքեւէն սրընթաց անցնելով և գէպի Լրեւմուտք երթալով ծովը կը թափի . իսկ Հարաւային կողմը յայնկոյս գիւղոյն 4 ջրբաղայներ կան և Համիրամայ տառապետէն կը դառնան , որոնցմէ երկուքը նոյն վանոցն է , իսկ մնացեալները Ղնդղայ հայ գիւղացոց : Վանքի բարձրիքը ըստ բաւականին պողատու և շինութեան համար կաղամախի եւ այլ ծաւեր կուն որ ըստ ամենայնի զուարձալի և զմայելի տեղ մ'է , իսկ Լրեւելեան և Հիւսիսային կողմը վանոց մէկ ժամ երկայնութեամբ եւ կէս ժամ լայնութեամբ վանքի սեպհական դաշտավայր մը կայ , որոյ հողն արգասաւոր է և բերրի և կ'առաջուի Համիրամի գետաաւակէն :

Վետոյն Լրեւելեան և Հարաւային եզերքը կէս ժամ հեռաւորութեամբ Վուկանց անուն փոքրիկ գիւղ մը կայ , որ 1851 ին Լրտամբրտ գիւղէն Պալրամ աղա անուն բռնաւոր տաճիկ մը նոյն գիւղացիները հարածսկան ընելով գիւղի հողը աւ կալուածները բռն լորովին իւրացուցած է :

Ղնդղ գիւղէն ելելով և երկու ժամու չափ գէպի արեւելք երթալ

րով հասանք Վեմ անունով Հայոց գիւղը, որ Համիրամայ առուագետի մօտ լեռան ստորոտը շինուած է եւ ունի բնակիչ մինչև վաթսուսն տաւն : Կամարաշէն եկեղեցի մը կայ, բայց անշուք : Վիւղիս ստորոտէն սկսեալ մինչեւ ցպետն ընդարձակ տարածութեամբ ջրաբքի արգասաւոր դաշտ մը կայ, որ Վեմ գիւղացւոց սեպհական կարուածն է եւ միանգամայն կ'ոռոգուի Համիրամայ առուակի ջուրէն : Վիշերը այս գիւղը օթադայեւրով առաւօտ ժամը մէկին մեկնեցանք ու ժամը երեքին հասանք Սլւրխու Սուրբ Դշանի վանքը, որ Վեմայ ժամու կէս հեռաւորութիւն ունի : Լյս մենարանն քառակուսի դմբէթաւոր գեղեցկաշէն վանք մ'է, սրբատաշ քարէ պարսպով ամրացած, և լեռան մը վրայ շինուած, որոյ մէջ 21 սենեակ

ներ կան, 20 քայլաչափ լայնութիւն ունի և ըստ բաւականին բարձրութիւն, ինքը կը նայի դէպի հարաւ, իսկ հիւսիսահողմը ահագին քարանձաւներ կան, որոց բարձրութիւնը անմատչելի է : Լյս քարանձաւաց ստորոտէն բարեհամ աղբիւր մը ելլելով մենարանի մէջ կը թափուի, իսկ Լրեւելեան կողմի քարանձաւին երկու կողմոց փոքր քարայր կան, որոնց համար կ'ըսուի իբր թէ Սարինոս ձգնաւոր այսպրերուն մէջ կը ձգնի եղեր, իսկ պարսպին ներքեւ Լրեւելեան կողմը այգի մը կայ, ամենատեսակ պողպոքեր ծառատունկներով զարդարուած : Լյս մենարանէն մեկնելով և մի ժամ ձաւապարհ երթալով հասանք Խոռոնութ անուն գիւղը :

(Պիտի շարանախոյ) :

Բ Ե Ր Ո Յ Ե Կ Ը Ն

ԱՌԱՔԻՆԻ ՈՒ ԲԱՂԱՔԱԿՒՐԹ ՊԱՏԱՆԻ

(Հարուստութիւն, տես թիւ 8) :

Որ գիւղը կամ աւանն որ շատ գինեւորուած կը տեսնէր, Լընէ, կ'ըսէր, ինչ կայի իբր ծորը շար իւր : Բնկերական խօսակցութեանց մէջ թէ որ տեսնէր որ շարակօտութիւն կ'ընէին՝ Լընուր վերն ընէր, կ'ըսէր, ինչ որ իբրեւզ գիտնային ու ըստի գրեթէ իբրեւզ ըլլային : Լնուշէր ուղեր որ յանցանքը կամ արդիւնքը բազդին տրուի, և բազդ ըսելը գործողութեան մը պատճառները չը գիտնանիս է, կ'ըսէր : Բնդունայն ժամ միագամառութեամբ վաճառանոցները յաճախողն մը ըսաւ : Դորս ելլելովք Բան մը լսակեցար, աւելոր ծածկեր ըլլէր, Բանը գործար երանային, սրտած Բաները փոքր յոսիկան ծղան ծղի ու առանց խորոպոսիկան մ'դորմեալու գիւղեր :

Հարուստ գիւղապետատիրի մը բերնէն, Սէն ասիւղեղե իր յանդիման, հասաւ շանքը լեռնով շարման վե, ըսաւ, կրաման փոքր կամար մը իբր իր ինչ է :

Ուրիշ մը ալ երբ շատ բան կար դացած ըլլալուն վրայ կը պարծենար Լընի լաւ իւլար, ըսաւ, որ շար Բան մը իբր պահած ըլլալու վրայ պարծեալիս :

Դարձեալ երբ մէկը Վերադայն Լաբին մեր ամեն փոփոքածներն ունենայնուս վրայ է՝ կ'ըսէր : Չէ, գերագոյն Բանն մայն իբր արտօնական ուղեցած Բաներնուս փոփոքել է, ըսաւ :

Լընարհոս ճաննալու համար հարկ չկայ կ'ըսէր, շատ ճամբորդութիւն ընել, այլ լաւ կերպով ընել, ամէն բանի պատճառնու ինչ բանի ծառայիլը

հարցընել, առանց ասոնց ընդունայն է ճամբորդութիւնը. վասն զի ամեն տեղ երկիրքը նոյնպէս կապոյտ է, ջուրը կը վազէ և ծոյլերն աղքատ ու վասանուն են:

Հրամանեղ ալ կը հասկնաս, վրայ բերաւ գեղին մեծը, որ Սերովէնն առածներ ու բարոյական խօսքեր կը սիրէր, աս առածներէն շատ բան հաւաքած է պղտի գրքոյկի մը մէջ, որ իր որդուցը թողուց. կ'ուզէս մէկ քանին ըսել: Վրքերը մարդու երջանկութեան կորստեամբը միայն կը յազին:

Եւ աւագոյն է Լստուծոյ խաւրածը՝ քան թէ մարդու ու զանր:

Պէտք չէ ուրիշներուն՝ ըրածին նրանիւ, այլ որոնք որ աղէկ կ'ընեն:

Իւր որ չարախօս մը կայ՝ շուտ մը երկու թշնամիք կը ծնանին:

Սեծութիւնք եւ փառաւորութիւնք ծովու նման են. որչափ բաւցուխ, այնչափ աւելի վտանգաւոր է:

Եւ աւագոյն ստացուածքը՝ ընտիր արուեստ մը ունենան է, Եւ աւագոյն է բարի բան մը գիտնալը, քան երեսուն չարիք:

Ինչպէս որ կ'ուզես ուրիշներն ըզբեղ համարին, ջանա այնպէս ըլլալ:

(Պրոֆ շարտմոտի)

ԵՆԵՆԵԿԵՐԵԿԵՆԻ

Ներկայ ամոցս ժամանակագրական գէպքերուն մէջ նշանաւոր է Իտալիոյ թագաւորի երկրորդ որդի Լիւիգէ (Նովակալ (Վիրալ) Իշխանի սրբազան տեղեաց այցելութեան գալը և դատած ընդունելութիւնը:

Իշխանի գիմաւորութեան հանդէսը կատարուեցաւ քաղաքէն արասարց թագաւորաց Գերեզմանաց մօտ գրտնուած ձիթաստանի գաղտնաբերմէջ, ուր յատկապէս վրաններ պատրաստուած էին, կուտակալ Նազիֆ Փաշայի հրամանաւ, ընդունելութեան համար և քաղաքիս զօրական Փաշան իւր զբոստումբով հանդերձ, (Նազիֆ Փաշան ընդառաջ գնացած էր Իշխանին քանի մի ժամ ճանապարհ աւելի), բոլոր Հիւպատոսները իրենց թարգմաններով. մեր Սրբազան Պատրիարքը երկու եպիսկոպոսներով և թարգմանով, Յունաց և Լատինաց վանուց թարգմանները և այլ նշանաւոր անձինք կը սպասէին Իշխանը ընդունելու: Այն վրանաց մէջ գիմաւորութեան և ընդունելութեան արարական խօսակցու-

թիւնները և մեծարանքը կատարուեցին զինի՝ Իշխանը սեղեկութեամբ գիմաւորաց և բոլոր հանդիսականաց զօրական նուագ արանաց հնչուածքներով քաղաքը մտաւ Վասակապի (Հասմա) անուանեալ գոռնէն և իջեւանեցաւ կանխապէս պատրաստեալ հիւսնոցին մէջ:

Իշխանը, իւր սակաւօրեաց ներկայութեամբ Պաղեստինի մէջ, շրջապալեց ի Հայր Լորրահամ, Իթիօպիէ, Յովհաննու ծնունդ, Իթիօպիէ, Եթովպիան և այլն, և ապա վերադարձ քաղաքը գաղտնաբերմով և բոլոր Հիւպատոսաց, Պատրիարքաց և այլ մեծամեծաց հրաշքերի այցելութիւնն ընդունելով՝ շքեղ հանդիսիւ ելաւ քաղաքէն:

Իւրախալի է մեզ յայտնել որ թագաւորազուն Իշխանը արասարին շքեղ փառաւորութեանց հետ բարոյստիկան գեղեցիկ յիշատակ եւ թողուց Լուրուսաղէ մի մէջ, այն է ինքնին սկզբնուորութեան առաջին բարձր գարկելով մի գեղեցիկ հաստատութեան հիմնադրութիւնը քաղաքէն դուրս յար-

Ց Ա Ն Կ

Ս Ե Պ Տ Ե Մ Ի Ե Բ .

Տարբերութիւն Բանաստեղծութեան և Տարալու փութեան	193—197
Հռովմայեցւոյ մեծութեան եւ անկման պատ- ճառները	198—200
Ճատ Ստեփաննոս վարդապետի թովմաձանեան	201—203
Սաղթանք առ սուրբ Կրորդութիւնն	204
Կենսագրութիւն Պապալայ (Երոնիմիէ)	204—207
Խօսակցութեան վրայ	207—209
Տեղեկագիր Խաչակ Արքեպիսկոպոսի և Տիմութեա Օ . վարդապետի	209—212
Համառօտ ստորագրութիւն Հոյկաձոր և Ռատն գաւառաց	212—214
ԲԱՐՏՅԱԿԱՆ—(Երաքինի ու Բաղարապիրթ պատանի (Երոնիմիէ)	214—215
ԺԱՄԱՅԱԿԱՒԻԱԿԱՆՔ	215—216
Հնդկաստանէն սուրբ Մթողոց, Թանգարանին նուիրուած գրչագիր գրեանք	216

ԲԱԺԱՆՔԻՒՄԻՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Մեծը ամէ ամի կը հրատարակուի 24 երես բաղկացեալ ութամս
թղթով .
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէճիսիէ հանդերձ Խմբագրակի ծախ-
քովը, կամիճիկ վճարել .
- Գ. Զատ տետրակ առնել աւարդ, պետք է ամեն մէկ տետրին չորս դա-
նկեան վճարել .